**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

***Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ամասիա բնակավայրում կրթահամալիրի կառուցման 2-րդ***

**ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ**

***Ամասիա բնակավայր***
***19.11. 2025թ.***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով 2025թ. նոյեմբերի 19-ին ժամը 15:00-ին Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ամասիա բնակավայրում կրթահամալիրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ամասիա բնակավայրում «Կապիտալ դիզայնի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Մասնկացում էին ՇՄԱԳ-ի ներկայացուցիչներ, Ամասիա բնակավայրի վարչական ղեկավարը, աշխատակիցներ, դպրոցի աշխատակիցներ, նախաձեռնող կողմի և կապալառու ընկերության ներկայացուցիչներ և բնակիչներ /մասնակիցների ցանկը կցվում է/:

ՇՄԱԳ-ի ներկայացուցիչ Սուսաննա Անտոնյանը ներկաներին տեղեկացրեց կրթահամալիրի կառուցման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերը և դրանց կանխարգելման եղանակները: Արձանագրեց նաև առկա թերությունների մասին, որոնք պետք է շտկվեն փորձաքննական գործընթացի վերջնական փուլը ավարտին հասցնելու համար:

Առկա թերությունների մասին փաստեց նաև ՀՏԶՀ ներկայացուցիչ Արմինե Գաբրիելյանը, նշելով որ այժմ վերահսկողությունը իրականացվու է իրեց կողմից և իրենք հետևողական կլինեն առկա խնդիրների շտկմանը:

Ամասիա բնակավայրի բնակիչները բարձրացրեցին իրենց հուզող հարցերը, որոնք վերաբերում էին դպրոցի կառուցման, հետագայում շահագործմանը, աշակերտերի և մանկապարտեզի սաների թվաքանակին:

Ընկերության ներկայացուցիչները հայտնեցին, որ կրթահամալիրը կառուցվելու է գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան: Կարևորելով կրթահամալիրի դերը և անհրաժեշտությունը՝ հանրային լսման մասնակիցները իրենց դրական կարծիքը հայտնեցին իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Սուսաննա Անտոնյանը հավելեց, որ նախատեսվող գործունեության տարածքում և հարակից մոտակա տարածքներում բացակայում են Կարմիր Գրքի բուսատեսակները, կենդանատեսակները, ինչպես նաև պատմության, բնական հուշարձանները և մակերևութային ջրերը:

Հանրային լսմանը այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

**ՇՄԱՓԿ փորձագետ՝** **Սուսաննա Անտոնյան**

**«Կապիտալ Դիզայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ** **Էդուարդ Դավթյան**

ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ
"CAPITAL DESIGN"
00149653